ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մնադաստիրարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան

Դաստիարակ՝ Մարիետա Դամիրչյան

Մանկապարտեզ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Հետազոտության նպատակը՝

1-Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով ն/դ ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողը կարող է պլանավորել և անցկացնել ն/դ կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան աշխատանքներ:

2-Ընտրել եմ այս թեման, որովհետև նա նախադպրոցական մանկավարժի աշխատանքային գործունեության ողջ իմաստն է՝ թե, որքանով եմ տիրապետել իրականացվող ուսումնական մեթոդներին և ռազմավարություններին:

Զգտել որքան հնարավոր է շատ զբաղվել ինքնակրթությամբ, կիրառել նոր հետաքրքիր մեթոդներ:

Կաշխատեմ իրականացնել համալիր ծրագրում ներկայացվող պահանջները, որքան հնարավոր է սկզբնական տարրական գիտելիքներով հարստացնել սաների պատկերացումները, կարողունակությունները, տրամաբանությունը, խոսքը, ճանաչողականությունը: Այս թեման իր մեջ ներառում է ամբողջ կատարվող աշխատանքների բնույթը՝ բաղադրիչները իրենց վերջնարդյունքներով, չափորոշչի ոլորտները, կարողունակությունները:

Զգտել հասնել ցանկալի արդյունքի մանկավարժի և խմբի սաների աշխատանքի շնորհիվ:

Հետազոտական աշխատանքի ընթացքում, աշխատելով նոր ծրագրերով, կձգտեմ նոր ստեղծագործական ոգով, որը կբարձրացնի իմ պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ, կաշխատեմ նոր մասնագիտական ձեռքբերումներով՝ շնորհիվ երեխաների հետ շփման բազմազան միջոցների տիրապետմանը և դպրոցի նախապատրաստման փուլում նրանց գործունեության ղեկավարմանը:

Իրականացնելով երեխայի ուսուցումն ու դաստիարակությունը, համատեղ գործելով, բացահայտել երեխաների հույզերը, նախասիրությունները, զգացմունքները՝ երեխային տեսնել որպես մեր հասարակարգի լիարժեք անդամ:

Ինչպես մեծ մանկավարժ Վովենարգն է նշել. <<Գիտելիքը գանձ է, բայց նրա բանալին պրակտիկան է>>:

Ելնելով ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն ավագ խմբի նախադպրոցական կրթության հիմնական ծրագրի պահանջներից, այն միտված է

խթանելու երեխայի զարգացման բոլոր ոլորտները: Ծրագրային նյութի ընտրության գլխավոր չափանիշը՝ երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան հոգեկան և ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովումն է:

Ծրագրի նպատակները իրականացվում են տարաբնույթ գործունեության տեսակներով՝ խաղային, աշխատանքային, ուսումնական, գեղարվեստական…

Դաստիարակը իր աշխատանքը պլանավորելիս առաջնորդվում է ծրագրային հետևյալ պահանջներից՝

V համապատասխանությունը նախադպրոցական կրթական չափորոշչին

V կրթության բնույթը

V երեխաների և մեծահասակների փոխգործունեության մոտեցման ապահովումը

V Ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զարգացումը

V նախադպրոցական կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքների և պարտականությունների, բնագիտության ծանոթացման ներառումը:

Ահա ինչպես են ներկայացրել մեծ մանկավարժները կրթության մասին.

__<<Մեր բարոյական պարտականությունն է, յուրաքանչյուր երեխայի հնարավոր չափ լավագույն կրթությանը տալ>>

Դեսմոնդ Թութու

__<<Ես սովորել եմ ոչ թե նրանցից, ովքեր ինձ սովորեցրել են, այլ նրանցից, ովքեր խոսել, զրուցել և հաղորդակցվել են ինձ հետ>>

Ս. Օգոստինոս

__<<Սովորեցնել՝ նշանակում է կրկնակի սովորել>>

Թելման

Պլանավորումը կազմակերպելիս կրթական ծրագիրը պետք է նպատակաուղղված լինի՝

__հետաքրքրասիրությանը

__ընդունակությունների զարգացմանը

__ստեղծագործական երևակայության զարգացմանը

__հաղորդակցության, հմտությունների ձևավորմանը

Նախադպրոցական կրթական ծրագիրը հիմք է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության համապատասխանության օբյեկտիվ գնահատականի համար:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ նախադպրոցականի բազմակողմանի կրթությունն ու զարգացումը մանկապարտեզում, մեծապես կախված է մանկավարժական բոլոր աշխատողների մասնագիտական որակներից, նաև գործառույթներն ու պարտականություններն իմանալուց:

<<Նախադպրոցական Կրթության պետական Կրթական չափորոշիչը>> նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի զարգացման կրթական ծրագրերի բովանդակությանը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքները:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է: Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք, հնարավորություն է ընձեռնում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնական գործընթացը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ոլորտներն ու կարողունակությունները

1) շարժողական ոլորտ

2) խոսքի և հաղորդակցման ոլորտ

3) հուզական, սոցիալ անձնային ոլորտ

4) իմացական ոլորտ

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

Ուսուցման և զարգացման գործընթացում լրացնում են մեկը մյուսին կարողունակության ձևավորմամբ պայմանավորված վերջնարդյունքները ունենալու ակնկալիքով:

Ավագ խմբի 5-6 տարեկանների կրթական հիմնական ծրագրով սահմանված մակարդակը ապահովում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով յուրաքանչյուր սանի զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ և

կարիքների գնահատմամբ կազմակերպվող աշխատանքը արտացոլում է 6 ծրագրային բաղադրիչներ՝

Խոսքի զարգացում

Ինձ շրջապատող աշխարհը

Մաթեմատիկական տարրական պատկերացումներ

Ֆիզկուլտուրա

Կերպարվեստ և կառուցողական աշխատանք

Կրթության բովանդակության չափորոշչով սահմանված հասանելի մակարդակը ապահովում է կրթության բաղադրիչների միջոցով, որոնք իրականցվում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ, զարգացմամբ նախադպրոցական տարիքի ավարտին՝

Լեզվական և հաղորդակցական կարողունակություն

Ճանաչողական և մոտիվացիոն

Ինքնաճանաչողական և սոցիալական

Ժողովրդավարական և քաղաքացիական

Թվային և մեդիա

Մշակութային

Մաթեմատիկական և տեխնիկական

Տնտեսական

Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն

Երեխայի զարգացումը համակողմանի լիարժեք է դառնում երբ բաղադրիչները և ոլորտները փոխկապակցված են, նշված վերջնարդյունքները ուղղված են կարողունակությունների ձևավորման ու զարգացման ուսումնական տարվա ավարտին։ Երբ դաստիրակը նպատակ է դնում սաների մեջ ձևավորել առաջնային կարողունակություն, որոնք սահմանված են կրթական չափորոշիչով, պետք է աշխատել կիրառել նորարական տեխնոլոգիաներ։

Անպայման պետք է զարգացնել կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը, ճանաչողությունը։

Պարապմունքները իրականացնելիս խիստ կարևոր է հաշվի առնել երեխայի բարեհոգեբանական վիճակը, զրուցել երեխայի հետ իրեն հետաքրքրող, իրեն հուզող հարցի, երեույթի մասին։

Պարապմունքների կազմակերպման հիմքում առաջնային է կարողունակությունների վրա հիմնված կրթական մոտեցումը։

<<Կարողունակությունների նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության ուսուցման և դաստիրակության գործնթացում ձեռքբերված գիտելիաի, կարողությունների, հմտությունների արժեքների հիման վրա արձագանքելու ձևերն են>>:

Դաստիրակության հիմնական նպատակը նախադպրոցական տարիքի ավարտին կարողանալ անձի ձևավորմն է, որը կկարողանա հաղորդակցել տարբեր իրավիճակներում և միջավայրերում, ակտիվ մասնակցության կունենա հասակական կյանքին, կդրսեվորի ինքնուրույնություն, կունենա ինքնասպասարկման և ինքնակազմակերպման հմտությունների, կտիրապետի առողջ ապրելակերպի վարման կանոններին, բարեվարքության և սոցիալական պարզագույն կանոներին։

Կարևոր է իմացական գործնթացի զարգացման մակարդակը՝ քննադատական մտածողության զարգացումը։

Մաթեմատիկական տարական պատկերացումների ձևավորումը պահանջում է երեխային զինել վերլուծելու, մոդելավորելու, դասակարգելու կարողություններով։

Ընթացիկ դասնթացի ժամանակ պատրաստեցինք քարտեր, ծնողների մասնակցությամբ երեխաների քանակին համապատասխան, թիվը կազմությանը և ճանաչողությանը զարգացնող։

Դիդակտիվ խաղերի համար նյութերց և դա կիրառել ենք ավագ խմբում 6-ից մինչև 9 թվերի ուսուցանելիս։ Կարողունակ սանը կկարողանա գնահատել գեղցիկը, նկարը ճանաչի հայ և արտասահմանյան մանկագետներկ և նրանց աշխատանքներին, ունակ լինի կերպարվեստի, երաժշտության միջոցով արտահայտելու սեփական հույզերը, հարգալից վերաբերմունք ցուցաբերի ազգային տոների և ավանդույթների նկատմամբ, կգնահատի ինքը-իրեն, կդրսևորի սեր և նվիրվածության հայերենի երկրի հանդեպ։

Երեխաների ֆիզիկական, մտավոր, զգայական, բարոյական, աշխատանքային, էկոլոգիական, տնտեսական, գեղարվեստակագիտական դաստիրակություն խնդիրները

իրականացվում են ծրագրային բաղադրիչներում և ուղղված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը։

Հետազոտական աշխատանքներ կատարելու ընթացքում ես աշխատում եմ ավագ խմբում, 5-6 տարեկանների, խմբում ներառված են 30 երեխաներ։

Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիրակը պլանավորում և իրականացնում է երեխաների ուսուցման ու դաստիարակությանը, կատարում է ամենօրյա աշխատանք, ապահովում է սաների առողջության պահպանումի և ամրապնդումի, պատասխանատու է նրանց կյանքի և առողջության համար։

Դաստիրակը իր առաջ է դնում պլանավորման խնդիրները՝ կիրառել ժամանակակից հնարքներ, խաղային տեխնոլոգիաներ, խաղալիքներ, նյութեր, համապատասխան նկարներ, կատարել փորձեր, էքսկուրսիաներ, միջոցառումներ կազմակերպել։ Դաստիրակի խոսքը պետք է լինի գրագետ, ճիշտ ինտոնացված։

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիրակը կազմում է տարեկան պլան, ելնելով ծրագրի պահանջներին ուսումնական տարվա սկզբին մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ կատարվում է քննարկում, այնուհետև հաստատվում է հաստատության տնօրենի կողմից, որից հետո դաստիրակը կազմում է շաբաթական պլան, ունենալով մշակման հատուկ ձև և աշխատում իրականացնել աշխատանքները։

Աշխատանքները իրականացնելիս մեծ դեր ունի հաստատության բանիմաց տնօրենի մասնակցությունը ուսումնական գործընթացին։ Դիտումների, մեթոդաժամերի միջոցով աջակցել կատարվող աշխատանքներին, տրամադրելով նոր հետաքրքիր նյութեր, ինքնակրթությամբ զբաղվելու գրականությանը։

Հետազոտական աշխատանքի ընթացքում կազմակերպել է բաց պարապմունքներ ավագ խմբի սաների հետ, մասնակցությամբ տնօրենի, նոր մեթոդների, ինչպես թեմատիկ, այնպես էլ ինտեգրված պարապմունքներ։

Պարապմունքի ընթացքում որոշ չափով հասա նպատակին, իսկ դժվարացող երեխաների հետ կկատարենք շարունակական աշխատանք։ Ծնողներին տեղյակ պահել կատարվող աշխատանքների բնույթին, համատեղ փոխօգնության պլան կազմել, հաղթահարելու դժվարությանը։

Պարապմունքները պլանավորելիս կիրառել եմ խիկ մոդելը։

Ընթացքում կիրառում եմ ԳՈՒՍ և Տ- աձև մոդելները

3)Ոտանավորի ուսուցում նկար աղյուսակի միջոցով

4) Հեքիաթը նկարների միջոցով

5) Կիրառել եմ բաց հարցում - ինչո՞ւ նկարեցի միրգ

փակ հարցում - ինչ՞ ես սիրում։

Բոլոր պարապմունքները կառուցվում են խաղային հենքի վրա

<<Խաղը կարևոր նշանակություն ունի երեխայի կյանքում, ունի այն նույն նշանակությունը ինչը մեծահասկի մոտ' գործունեության, աշխատանքը, ծառայությունը։ Երեխան ինչպիսին կլինի խաղի մեջ մեծ մասամբ այդպիսին էլ կլինի աշխատանքում երբ մեծանա։ Այդ պատճառով ապագա գործչի դաստիարակությունը ամենից առաջ կապված է խաղի մեջ>> Ա.Ս.Մակարենկո։

Ուստի կարևորելով պլանավորման դերը, դաստիրակի խնդիրն է նշել պարապմունքի քայլաշարը' նախապատրաստական աշխատանքից մինչև արդյունքների գնահատում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Հետազոտական աշխատանքի ավարտին ես հասկացա, որ հարկավոր է շատ զբաղվել ինքնակրթությամբ, ուսումնասիրել և կիրառել նորարարություններ;
- Պարապմունքներին կարելի է ասել, որոշ չափով հասել եմ նպատակների իրագործմանը, շարունակական աշխատանք զանել ծնողների հետ, համագործակցելու միասնական նոր ելքեր գտնել խրախուսելու օգնելու երեխաներին։
- Ինչպես ինքս ինձ, այնպես էլ դաստիրակներին խորհուրդ կտամ, որ անհնդատ ուսումնասիրեն ծրագիրը, կատարենք փորձի փոխանակում, բարձրացնենք մեր զարգացումն մակարդակը ուսումնասիրելով և կիրառելով նորարարություններ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

<<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենք 2020թ.

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափոչոշիչ ՀՀ կառավարության 13/05/2021 թիվ 744-Ն որոշում

Ավագ խմբի կրթական հիմնական ծրագիր

Աֆորիզմներ

Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար

3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով

Հեղինակային խումբ՝ Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան, Մ. Միտոյան